ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

# ՀԵՏԱՔՐՔԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆԸ*

*Հայաստանի բանվորների, աշխատավոր գյուղացիների և զինվորների 1920 թվականի մայիսյան հերոսական ապստամբությունը բացառիկ կարևոր տեղ է գրավում Սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարի պատմության մեջ։*

*Վաղուց ի վեր զգացվում էր այնպիսի մի մոնոգրաֆ աշխատության ստեղծման անհրաժեշտությունը, որի մեջ մարքսիզմ-լենինիզմի դիրքերից գնահատվեին Հայաստանի աշխատավորության մայիսյան ելույթները, ցույց տրվեր դաշնակցական արյունարբու տիրապետության դեմ մայիսյան հերոսամարտերի նշանակությունը։ Այդ բացը զգալի չափով լրացնում է ընկ. Գ. Ռ. Ղարիբջանյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին» արժեքավոր աշխատությունը։*

*Այն սկսվում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո Հայաստանում ստեղծված իրադրության համառոտ վերլուծությամբ։ Աշխատության մեջ ցույց է տրված, որ Մայիսյան ապստամբությունը տեղի ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի անմիջական ներգործությամբ, ռևոլյուցիա, որը մարդկության պատմության մեջ առաջին անգամ բացեց կապիտալիզմի խորտակման և սոցիալիզմի հաղթանակի դարաշրջանը։ Ռուսաստանի ճնշված ու ստրկացված ժողովուրդներին ռևոլյուցիոն դրոհի հանեց շահագործողական կարգերի դեմ, հանուն բանվորա-գյուղացիական իշխանության հաստատման, հանուն սոցիալիզմի։ Հայաստանի աշխատավոր մասսաները, որոնց համար գնալով ավելի և ավելի պարզ էր դառնում, որ ժողովուրդների բախտը սերտորեն կապված է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բախտի հետ, իրենց բազմաթիվ միտինգներում և ժողովներում, ընդունած բանաձևերում ջերմորեն ողջունեցին սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, Սովետական իշխանության հաստատումը և պատրաստակամություն հայտնեցին կրծքով պաշտպանելու սոցիալիստական ռևոլյուցիայի նվաճումները։ «Երդվում ենք զենքը ձեռքներիս պաշտպանել նոր բանվորա գյուղացիական կառավարությունը,— հայտարարում էին 1917 թ. նոյեմբերի 10-ին Ալեքսանդրոպոլում տեղի ունեցած միտինգի մասնակիցները — և պատրաստ ենք վճռական հակահարված տալու կոնտրռևոլյուցիոն տարրերին, եթե նրանք փորձեն դեմ գնալ Սովետական իշխանությանը։*

*Ողջունում ենք համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդ, քաղաքային և գյուղական չքավորության փորձված պաշտպան Լենինին» (էջ 9—10)։*

*Երախտագիտության զրքում մերկացվում է ամերիկա-անգլիական իմպերիալիստների գաղութարարական քաղաքականությունը Հայաստանում, տրվում ամերիկա-անգլիական իմպերիալիստների հավատարիմ գործակալներ՝ դաշնակների արյունարբու տիրապետության շնորհիվ, սովի, քայքայման ու բնաջնջման դատապարտված հայ ժողովրդի դառն վիճակի վերլուծությունը։*

*Վ. Ի. Լենինը իր հավատարիմ աշակերտներ ու զինակիցներ Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ի. Միկոյանի միջոցով հսկայական օգնություն կազմակերպեց Հայաստանի աշխատավորությանը դաշնակցական բռնակալական լծի դեմ նրանց մղած ազատագրական պայքարում։ Հայաստան ուղարկվեցին պարտիական աշխատողներ, անձնվեր ռևոլյուցիոներներ Ասքանազ Մռավյանը, Ստեփան Ալավերդյանը, Բագրատ Ղարիբջան-*

---

* Գ. Ռ. Ղարիբջանյան, *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին, Երևան, 1955։*

յանը, Հովհաննես Սարուխանյանը, Եղոր Սևյանը, Ղուկաս Ղուկասյանը և շատ ուրիշներ։ Հայաստանի կոմունիստական կազմակերպություններն ամենուրեք եռանդուն աշխատանք ծավալեցին աշխատավորական մասսաներին ռևոլյուցիոն գրոհի նախապատրաստելու, դաշնակ ավանտյուրիստների լուծը տապալելու ու Սովետական իշխանություն հաստատելու համար։

Աշխատության հեղինակը՝ հենվելով արխիվային հարուստ նյութերի վրա, հանդամանորեն նկարագրում է Հայաստանի բանվորների, գյուղացիների և ռևոլյուցիոնորեն տրամադրված զինվորների Մայիսյան ապստամբության ծավալումը Ալեքսանդրոպոլում, Սարիղամիշում, Կարսում, Նոր Բայազետում, Գիլիջանի գավառում, Զանգեզուրի, Գորիսի, Սիսիանի, Ղափանի, Մեղրու և այլ շրջաններում։ Գրքում տրված է Մայիսյան ապստամբության հերոսներ՝ Ստ. Ալավերդյանի, Ս. Մուսայելյանի, Ի. Լարիրջանյանի, Ե. Սևյանի, Ղ. Ղուկասյանի, Արշ. Փանյանի, Հովհ. Սարուխանյանի և ապստամբության մյուս ղեկավարների ռևոլյուցիոն գործունեության համառոտ բնութագրությունը։

Աշխատության մեջ մերկացվում է ամերիկյան իմպերիալիստների, Անտանտայի դրածո, գեներալ Վրանգելի, մենշևիկների, կատեղների, էսեռների, սպեցիֆիկների ստոր դերը ապստամբության ճնշման գործում, որոնք դաշն կնքած հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ դաշնակների հետ, արյան մեջ խեղդեցին Մայիսյան ապստամբությունը։

Ընկ. Գ. Ի. Լարիրջանյանը հանդամանորեն վերլուծում է ՌԿ(բ)Պ Հայաստանի կոմիտեի և Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի թույլ տված քաղաքական և ռազմա-ստրատեգիական մի շարք սխալները, որոնք բացասարար անդրադարձան ապստամբության ելքի վրա։

1920 թվականի մայիսին Հայաստանում առկա էին բոլոր անհրաժեշտ պայմանները զինված ապստամբության միջով դաշնակների տիրապետությունը տապալելու և Սովետական իշխանություն հաստատելու համար։ Մայիսմեկյան ցույցերի հաջողությունն ամենուրեք ակնհայտորեն ցույց տվեց,— ընդգծում է ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն իր զեկուցագրում,— թե որպիսի խոր արմատներ է ձգել պարտիան լայն մասսաների՝ այդ թվում նաև զինվորական մասսաների մեջ... հողը գրեթե ամենուրեք լրջորեն պատրաստված էր, դա մի պատահական, արմատազուրկ ապստամբություն չէր, բնավ երբեք (էջ 91)։

Գրախոսվող աշխատության վերջին գլխում հանդամանորեն ցույց է տրվում Հայաստանի աշխատավորության Մայիսյան ապստամբության նշանակությունը։ Ապստամբության շարժիչ ուժերն էին բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, հեգեմոնը՝ բանվոր դասակարգը։ Աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն գրոհը դաշնակցական անարգ կարգերի դեմ ղեկավարում էին կոմունիստները— աշխատավոր մասսաների արմատական շահերի անձնվեր պաշտպանները։

Մայիսյան ապստամբության մեջ աշխատավորական լայն մասսաների աչքում ընդմիշտ մերկացվեցին դաշնակները, իբրև օտարերկյա իմպերիալիստների հլու կամակատարներ, հայ ժողովրդի ստոր դահիճներ։ Աշխատավորության մեջ էլ ավելի ամրապնդվեց այն գիտակցությունը, որ հայ ժողովրդի փրկությունը հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ազատարար դրոշը Հայաստանի վրա ծածանելու, Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու մեջ է։ Այո՛, Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն անցան քաղաքական դաստիարակության մեծ դպրոց, սովորեցին, թե ինչպես կարելի է մարտնչել ու հաղթանակ տանել ենթ թշնամու դեմ։

Գրախոսվող գրքին կցված են երկու նորահայտ փաստաթղթեր Մայիսյան ապստամբության վերաբերյալ։ Նրանցից առաջինն է «1920 թ. մայիսի 31-ին, դաշնակցական դատարանում Բ. Ղարիբջանյանի արտասանած ճառի հեղինակային գրանցումը»։ Այդ ճառը տոգորված է անսահման սիրով դեպի աշխատավորական մասսաները և անհուն ատելությամբ դեպի ժողովրդի անարդ թշնամիները՝ դաշնակները։

Անձնվեր ռևոլյուցիոներ Ղարիբջանյանը դաշնակցական դատարանում բոցաշունչ ու անհողդողդ բոլշևիկին հատուկ ուղղամտությամբ հայտարարում է, որ իրեն դատապարտում են, որովհետև ինքը «դաշնակների պարտիայի դերեղմանափորն է», և ռևոլյուցիայի առաջին իսկ օրերից ղեկավարել է Կոմունիստական պարտիայի Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը։ Նա ասում է, որ իր ողջ գործունեության և քաղաքական ելույթների ընթացքում ինքը ղեկավարվել է հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, աշխատավորական մասսաների նկատմամբ անհուն սիրո նվիրական զգացմունքներով։ Նա անողոքաբար մերկացնելով դաշնակցական արյունարբու դահիճներին, հայտնում է հե-

տևյալ խորիմաստ մտքերը. «Իմ խոր համոզմամբ քաղաքական իրադրության այնպիսի արագ փոփոխման պայմաններում, երբ կոնտրռևոլյուցիայի բոլոր ուժերը ջախջախվեցին զարնվելով ռուս պրոլետարիատի դրանիտե կրծքին, երբ Արևմուտքում դանդաղ, բայց անշեղորեն հասունանում է պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու ձգտումը, իսկ Արևելքում՝ ազգային ինքնորոշման և իմպերիալիստական լծից ազատագրվելու ձգտումը, Ռուսաստանը սինթեզի է բերել այդ երկու մարտնչող ուժերը և վերցրել է համաշխարհային ռևոլյուցիայի կուրսը, որ բազմաչարչար Հայաստանը վերջնականապես կխեղդվի անծայրածիր մահմեդական ծովում, եթե նրա նավը կանգ չառնի սոցիալիստական Ռուսաստանի նավահանգստում» (էջ 110)։

Դուք ինձ մահապատժի եք ենթարկելու, թող այդպես լինի,— ասում է անձնվեր ռևոլյուցիոնները, ես երջանիկ եմ, որ գնում եմ իմ ընկերների՝ ժողովրդի լավագույն զավակների՝ Շահումյանի և նրա գլխավորած 26 կոմիսարների ուղիով։

Այդ հիանալի ճառը վերջանում է «Կեցցե ռևոլյուցիան, կեցցե ռևոլյուցիոն արյունով փրկվող հայ ազգը» կոչերով։

Երկրորդ նորահայտ փաստաթուղթն է «Ս. Մուսայելյանի նամակը ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային Կոմիտեին»։ Նամակում տրվում է Մայիսյան ապստամբության ճնշումից հետո դաշնակցական տեռորիստական դիկտատուրայի հետևանքով Հայաստանում ստեղծված մղձավանջային իրադրության վերլուծությունը։

Ընկ. Գ. Ղարիբջանյանի աշխատությունն արժեքավոր ներդրում է Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների Մայիսյան հերոսական ապստամբության վերաբերյալ նոր, գիտա-հետազոտական մոնոգրաֆիա ստեղծելու ճանապարհին։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ